

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի հայտարարագրերի վերլուծության վարչությունում փորձագետ ներգրավելու մասին

Աշխատանքների համառոտ նկարագրությունը՝

1. իրականացնել հայտարարագրման գործընթացի սահուն և անխափան իրագործումը.
2. իրականացնել հայտարարագրերի ստուգում և վերլուծություն՝ նախանշված հաճախականությամբ և սկզբունքներով, ինչպես նաև հայտարարագրերի ռիսկերի գնահատման, բացահայտման և մասնագիտական վերլուծության իրականացումը՝ հնարավոր անհամապատասխանությունները բացահայտելու և վերհանելու նպատակով.
3. իրականացնել անհրաժեշտ տվյալների գծով Բաժնի կողմից հարցումները պետական և ոչ պետական գերատեսչություններից, Հանձնաժողովին հասանելի ցանկացած ինֆորմացիոն բազայից, ինչպես նաև հավելյալ տեղեկատվության կամ մանրամասների հայցումը հայտարարատու կամ երրորդ անձանցից.
4. իրականացնել հայտարարագրերի վերլուծության մեթոդաբանության նախագծերի մշակման ու կատարելագործման աշխատանքները.
5. իրականացնել հայտարարագրերի ձևանմուշների նախագծերի, ինչպես նաև հայտարարատու պաշտոնատար անձանց ծանուցման կարգի և հայտարարագրերի լրացման կարգի և ուղեցույցի մշակման աշխատանքները.
6. մշակել հայտարարագրերի վերլուծության արդյունքում բացահայտված անհամատեղելիության պահանջների խախտումների վերաբերյալ զեկուցումը,
7. իրականացնել հայտարարագրման գործընթացից բխող իրավական ակտերի և կարգավորումների նախագծերի մշակման աշխատանքները:

Փորձագետներ ներգրավելու ժամկետը՝ մեկ տարի:

1. Փորձագետի աշխատավարձը կազմում է՝ 256,623 դրամ դրամ (երկու հարյուր հիսունվեց հազար վեց հարյուր քսաներեք) ՀՀ դրամ:

Փորձագետների պարտականությունները՝

1. բարեխղճորեն կատարել աշխատանքային պայմանագրով ստանձնած աշխատանքները.
2. սահմանված ժամկետներում կազմել և ներկայացնել փորձագետի աշխատանքների ծրագրով նախատեսված հաշվետվությունները, վերլուծություններն ու տեղեկանքները.
3. պահպանել համապատասխան մարմնում սահմանված ներքին կարգապահական կանոնները, աշխատանքային կարգապահությունը.
4. պահպանել աշխատանքի պաշտպանության և անվտանգության ապահովման միջոցները.
5. իրականացնել ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով և աշխատանքային պայմանագրով իրեն վերապահված այլ պարտականությունները.

Փորձագետներին ներկայացվող պահանջները՝

- 1) բարձրագույն կրթություն.
- 2) տնտեսագիտության կամ ֆինանսավարկային բնագավառի առնվազն երեք տարվա կամ ֆինանսական վերլուծության բնագավառի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.
- 3) անգլերեն կամ ռուսերեն լեզվի ազատ տիրապետում.
- 4) իր լիազորությունների հետ կապված անհրաժեշտ հմտություններ.
- 5) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն,
- 6) Excel-ի լավ իմացություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում Հանձնաժողովի գլխավոր քարտուղարի անունով ([դիմումի ձևը կցվում է](#)).
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթուղթ (փաստաթղթեր).
- աշխատանքային գրքույկ (գրքույկի բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք/ներ կամ այլ փաստաթուղթ/եր համապատասխան մարմնից/ներից).
- արական սեռի անձինք՝ նաև զինվորական գրքույկ կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայական, կամ համապատասխան տեղեկանք.
- մեկ լուսանկար՝ 3 x 4 սմ չափսի.
- անձնագիր կամ նույնականացման քարտ.
- սոցիալական քարտ կամ հանրային ծառայության համարանիշ ունենալու մասին տեղեկանք.
- ինքնակենսագրական.
- հայտարարություն ՀՀ կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի N 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին ([հայտարարության ձևը կցվում է](#)):

Պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի կողմից ընտրություն կատարելու եղանակներն են՝

- դիմում ներկայացրած քաղաքացիների փաստաթղթերի ուսումնասիրություն.
- ինքնակենսագրականների ուսումնասիրություն:

Քաղաքացիները փաստաթղթերը ներկայացնում են պատճենների հետ միաժամանակ՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ **18 նոյեմբերի 2022թ.**

Փաստաթղթերն ընդունվում են միայն աշխատանքային օրերին՝ ժամը 10.00-ից մինչև 13.00-ը:

Աշխատանքի վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15

հեռ.՝ 012-77-77-24, էլեկտրոնային փոստի հասցե՝ hr.cpcarmenia@gmail.com